

րելու, այնքան թուրքը իրաւ էր իմ զգայնութեան վրայ: Ու մի՛ աճապարէք պատմութեան ուրուականները շար-
ժումի հանել: Մի՛ աճապարէք դասական թեմաներ ար-
ժեւորել, որպէսզի այդ ժողովուրդը ըլլայ բացատրելի,
առնուազն՝ հասկնալի մեզի. կը ձգեմ օտարներուն
ներկուած հիացումը: Այն գերմանը, այսօր իմաստասէր,
որ կը յաւակնի այդ ժողովուրդին մէջ ազնուա-
կանութիւն, քաջութիւն, մարդկութիւն գտնել, է՛ր,
1900ին, հաւանաբար իմ տարիքովս պատանի մը: Երկ-
րորդ կայսրութեան ծաւալումին հիացիկ, դէպի Արեւելք,
երբ աստուածընտիր ինքնակալը կ'այցելէր Պոլիս ու կը
վաւերացնէր 1895-96ի ահաւոր նախճիրներուն, գոր-
ծադրուած մեր վրայ, օրինաւորութիւնը: Ասիկա ան-
շուշտ չէ տակաւին թուրքը չճանչնալը, 1940ին իսկ, երբ
Ամերիկա եւ Անգլիա գիտնալով հանդերձ, որ թուրքերը
գերմաններուն հետ էին, քաղաքական իմաստութիւնը
արժեւորեցին անոր ծոցը տեղալով աշխարհի բոլոր
բարիքները: Ու հանգիստօրէն կը մտածեմ բոլոր այն ազ-
գերուն, որոնք ո՛չ միայն կարճ տեսան, այլեւ բռնի սխալ
տեսան՝ իրենց աս ու ան հաշիւներուն լոյսովը լուսաւորե-
լով պատմութեան գերազանց արատը, որ այդ ժողո-
վուրդն էր, է՛ աշխարհի երեսին:

Կը դառնամ մերիններուն:

Կը ճանչնայի՞ն զայն անոնք, որոնք կովկասէն կամ
Զուիցերիայէն, Ֆրանսայէն կը վարէին մեր հոգիները,
մեր ճակատագիրը:

Ահա ողբերգական հարցումը, զոր ըրեր եմ քառա-
սուն տարի առաջ՝ իմ ժողովուրդին ճակտի գիրը նժարի
բերող: Այդ մարդերէն հերձուած մը ինչպէս մեր կողմերը
մոլորող Մաթիկը աչքերուս առջեւ էր, անուշ, շնորհալի,
յիմար, տաք, հաղորդական, բայց այն քիչ կեանքը ճանչ-
նալու տարրական պարտքին մէջ: Այն օրերուն իմ պա-
տանի երեւակայութիւնս հիացումով հիւսեց անշուշտ
Մոսկուայէն... Պրոսա տարածութիւնը իբր ոստայն մը
ընկեր Մաթիկին ահաւոր հերոսութեան: Այն օրերուն,